

ՄԵԼԻ

Տարեկան գինը 10 ռուբլի կէս տարվան 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.
Թիֆլիսում գրվում են միմիայն իմպրիւմտան մէջ.
Մեր հասցէն. Тифлисъ, Редакция «Мелі».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տէլէֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի եւ տօն օրերէն).
Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզուով.
Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 1) կոպէկ.
Տէլէֆոն № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Յովհաննէս Գէորգեան Զիդիանեան, Նատալիա Գէորգեան Փէրիանեան որդիներով,
Սաթիւիկ Գէորգեան եւ Գէորգ Միքայէլեան Տէր-Ստեփանեանցները, ցաւօք սրտի
յայտնելով իրանց ազգականներին եւ ծանօթներին առաջին երկուսը իրանց սիրելի մօր,
հետեւեալները—մեծ-մօր եւ վերջինը—զոքանի.

ՕԿԱՆՆԱՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ ՉԻԳԻԱՆԵԱՆԻ

մահվան մասին, որ տեղի ունեցաւ մարտի 9-ին, խնդրում են չնոր՝ բերել յուզարկա-
ւորութեանը չարաթի, ամսիս 16-ին, առաւօտեան ժամը 10-ին, հանդուրժողի բնակա-
րանից (Անգլիական տաղաւթի փողոց, տուն Վարդանեանի № 20) դէպի վանքի մօտը եկե-
ղանի եւ այնտեղից թաղիվանքի գերեզմանատունը, Հոգեհանգիստը լինելու է ուրաթի,
երկուցիսն ժամը 7-ին

ԲՈՎԱՆԻԱԿՈՒԹԻՒՆ
Իրաւի են զեկաւարում.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒ-
ԹԻՆ, Ֆինանսների միւնիստրութիւնից. Մա-
նուկ Ներքին լուրեր.—ԱՐՏԱԲԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ,
Համակ Գերմանիայից. Արտաքին լուրեր.—ՀԵ-
ՐԱՅԻՆ.—ՍԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱ-
ՆԱԿԱՆ. Նամուկներ Թուրքիստանից:

ԻՆՉՊԷՍ ԵՆ ՂԵԿԱՎԱՐՈՒՄ
«Ղեկի» երէկվայ համարից մեր ըն-
թերցողները տեղեկացան այն եղելութիւն-
ների մասին, որոնք տեղի են ունեցել Ե-
րևանում թիւնական զարդի հոգաբար-
նուների ընտրելու ժամանակ: Ընտրութեան
ընթացքը թիւնը սկսվել է կանոնաւոր կեր-
պով, առաջ է տարվել մինչև քուէների
հաշիւը եւ ապա, երբ պարզվել է ընտ-
րելիների ցուցակը, յանկարծ նախագահողը
թողել է ընտրական ժողովը եւ հետագայի,
ընտրական ժողովը ընտրութիւնը վերջնա-
կան կերպով: Ընտրելիները ցանկին ան-
հիմն չէին նախագահողի համար եւ նա չէ
անցնել նրանց ընտրութիւնը վաւերացնել:
Սակայն երբ պէտք է վերջապէս մեր
ընտրական գործերից վերացվեն կամա-
լայնութիւնները եւ մոցնվեն կարգեր,
որոնք պարտաւորական լինեն թէ ժողո-
ւրդական են թէ նախագահողների հա-
մար: Միթէ՞ զարմանալի է, որ անախորժ
դէպքեր են տեղի ունենում մեր ընտրո-
ւական ժողովներում, երբ չէ պահպան-
ւում մի որոշ կարգ, երբ ամեն տեսակ
հանցանքներ են գործ դրվում ընտրողների
կողմէն: Ընտրութիւնը չքայնելու համար,
եթէ վաղը ձեզ հրաւիրեն եկեղեցական

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՆԱՄԱԿՆԵՐ ԹՈՒՐԿԵՍՏԱՆԻՑ
Սամարանդից գնում էի Բուխարայի Գիշեր
էր Երկաթուղու կայարանում նստելու տեղ
չէր:
Դպրիկի սեղանի շուրջը նստած էին զա-
ւառն ազգերի, զանազան տարազներով հագն-
ված մարդիկ Ահա սարճը գարեջուրը առչե-
լով, կամ դազան-թաթարը քիչ հեռու, մի քա-
նի գլխօրհակներ եւ պաշտօնականներ Մի-
խայր պարսիկներ, քաշված գաշիկի անկիւնը,
խառն էին իրանց առօրեայ առեւտրական
գործիքի մասին: Իսկ միւս անկիւնում նստած
էին մի քանի սեւ արարածներ, երեաները ծած-
կած, ձեռքերը ծէկների վրա դրած: Սրանք կամ
արաբի կամայք են կամ հրէայի Դժուար է
հասկանալ, որովհետեւ երկուսի շրջերը միատե-
սակ են, երկուսն էլ ծածկվում են սեւ ու
թանձր քոշով:
Դաշիկում կանգնած ծխախոտի մուխը աչք
էր ուտում: Եւ դուրս եկայ Պլատֆորմայի
վրա կայի, բազմաթիւ սարթեր, հրէաներ,
պարսիկներ, ռուսներ: Ամենքը նստած էին
գետնի վրա մէջերը պատին տուած: Ման ե-

մէջ, զոնէ յոյց տուած լինէր ընդունակու-
թիւն մի լաւ գործ կատարելու մանկա-
վարական ասպարէզում: Ընդհակառակը:
Նա խանգարող է հանդիսացել ամեն դէպ-
քերում եւ նրա պատճառով լաւագոյն ոյ-
ժեր չեն մօտենում մեր դպրոցներին, իսկ
եղածիւրը հեռանում են:
Վերջապէս պէտք է սթափվել այդ տը-
խուր դրութիւնից: Խղճացէք դպրոցը,
խղճացէք սաներին, խղճացէք կրթական
գործը: Մինչև երբ պէտք է շարունակվի
այս անտանելի տխուր վիճակը:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Ֆինանսների մի-
նիստը, համաձայն պ.պ. միւնիստրների յու-
ժարի 10-ի խորհրդակցութեան որոշման, ա-
ռաջարկեց Կայսր Ալեքսանդր II-ի Կիւլի պոլի-
տէխնիկական ինստիտուտի խորհրդին յայտնել
ուսանողներին, որ եթէ անկարգութիւնների
առաջն առնելու կամ դադարեցնելու համար
անհրաժեշտ համարվի ժամանակաւորապէս փա-
կել ինստիտուտը, ուսումնարանական զբաղ-
մունքների եւ քննութիւնների համար կորած
ժամանակը կը փոխարինվի ամառվայ մօտակայ
արձակուրդների հաշիւն. իսկ ուսումնարանա-
կան զբաղմունքները ընդհանուր առմամբ դա-
դարեցնելու դէպքում մինչև Լոբք շաբաթ,
քննութիւններ ամենեւին չեն կատարվելու եւ Ս
ու բարձր կուրսերի ուսանողները կը թողնվեն
հետեւեալ տարին նոյն կուրսերում, իսկ առա-
ջին կուրսի ուսանողները կարձակվեն եւ նորից
կընդունվեն նորից մտնող ուսանողների ընդու-
նելութեան ընդհանուր կանոնները ճիշդ պահ-
պանելով միայն:
Այս ֆինանսների միւնիստը, իրանից կախ-
ված բոլոր միջոցներով աշխատելով ուսանող-
ների համար պոլիտեխնիկումը փակելու անը-
պատ հետեւանքների առաջն առնել, յունվարի
26-ից առաջարկեց ինստիտուտի ղեկավարին
յայտնել ուսանողներին, որ նրանց բարձր ցան-
կանալով եւ թանգ գնահատելով դպրոցական
հաստատութեան վարելը, որի հիմնադրութեան
եւ բարգաւաճման համար կառավարութիւնը
այնքան ջանքեր է գործ դրել, նա, միւնիստը,
հրաւիրում է նրանց ինստիտուտի արժանա-
պատութեան համապատասխան խոհեմ ըն-
թացք ունենալ, եւ որ նրա եւ պրոֆէսորների
համար շատ ցաւալի եւ վերաւորական կը լի-
նի, եթէ ուսանողները մասնակցեն անկարգու-

Մեքայից, եւ զարմացմամբ հարցրի նրանից.
—Այլ-բայ աչքայ, կարծեմ դու նոր ես՝ վե-
րադարձել Մեքայից եւ հազիւ մի տարի լինի:
—Այո, թիւրայ, միայն տարի եւ կէս է, որ
վերադարձել եմ, բայց այնքան եմ հաւանել
սուրբ տեղերը, որ վճռել եմ գնալ այնտեղ առ-
այժմ 7 տարով, իսկ յետոյ, գուցէ ընդմիշտ:
—Այդ այդպէս 9 է որ դու բաւական գոր-
ծեր ունես, հարստութիւն, կին, երեխաներ:
—Այո, թիւրայ, կարողութիւնս եւ թողի
մաստիս եղբայրներս, մասամբ կնոյն, ծնող-
ներս ու զաւակներս, իսկ հետո առայ մի-
այն 12 տարեկան Արդիւ-Համիդ որդուս, ո-
րին այնտեղ ուսումի եմ տալու:
—Այդ ինչ անուն է, Արդու-Համիդ: Կար-
ծեմ ձեր մէջ այնքան էլ ընդունված անուն չէ,
ասացի ես, դաւանութեամբ յիշելով սուլթանին:
Բայց Այլ-բայը մեծ պարծանքով յայտնեց
ինձ, որ այդ անունը նա տուել է իր որդուն ի
պատիւ: Մահմադականների խալիֆ սուլթանի,
որը մեծ պատիւներով է ընդունում Պօլսում
այս կողմերից դնացող ուսուսուողներին Այլ-
բայի հետ մինք խօսում էինք ռուսերէն: Նա
բաւական ազատ էր խօսում, նոյն իսկ կար-
դում էր տեղական ռուս լրագրողները: Եւ, յա-
ճախ հետը պատահելով, սերունդ էի նրա հետ
զրուցել: Այլ-բայը բաւական աշխարհ տեսած
մարդ էր եւ ուրախ խօսակից:
Հասանք Գերմիէ կայարանը, որից մի քանի

թիւններին: Մի եւ նոյն ժամանակ, լիակատար
վստահութիւն յայտնելով ղեկավարին եւ պրո-
ֆէսորների ամբողջ կազմին, միմիստը խնդ-
րում էր ինստիտուտի իշխանութիւնից ազգել
երիտասարդութեան վրա եւ նախագգուչացնել
նրան, որ անկարգութիւնների դէպքում նա
հարկադրված կը լինի պ.պ. միւնիստրների խոր-
հրդակցութեան մատնացոյց արած միջոց գոր-
ծադրել:
Փետրվարի 12-ին, զեկուցումն ստանալով այն
մասին, որ պարապմունքները ինստիտուտում
չեն վերսկսվել եւ երջաթիւյալ ժամանակամիջո-
ցը լրանալուց յետոյ, ֆինանսների միւնիստը
կրկին անգամ հետադրեց ինստիտուտի ղեկա-
ւարին, խնդրելով նրան համազօյ ուսանողներին
անյապաղ սկսել պարապմունքները եւ մատնա-
ցոյց անել նրանց, որ ինստիտուտը իր հիմնա-
լու օրից եղել է առանձնապէս նպաստաւոր
պայմաններում, եւ որ ուսանողները ոչինչ ա-
ռիթներ չուեն դժգոհ լինելու ոչ իրանց դպ-
րոցի ներքին կենսից, ոչ պրոֆէսորների եւ
ոչ էլ իր, միւնիստրի, վերաբերմունքից դէպի
նրանց:
Այդ յորդորները աշողութիւն չուենցան եւ
ինստիտուտը փակելու մասին յայտարարված
միջոցը փետրվարի երկրորդ կէսից պէտք է գոր-
ծադրվէր իր բոլոր հետեւանքներով, բայց,
ի նկատի ունենալով ինստիտուտի խորհրդի
առանձին միջնորդութիւնը, որը յոյս էր յայտ-
նում, թէ ուսանողները կը սկսեն դասախո-
սութիւնները լսել Մեծ պատի ստալին շաբա-
թը անցնելուց յետոյ, որի ժամանակ կրկին լու-
րոր դպրոցներում պարապմունքներ չեն լի-
նում, ֆինանսների միւնիստը, ժողովրդական
լուստւորութեան միւնիստրի համաձայնութեամբ,
հարաւոր համարեց պարապմունքները սկսե-
լու վերջնական ժամանակամիջոցը նշանակել
մարտի 5-ը:
Այժմ ստացված տեղեկութիւնների հիման
վրա, պարապմունքները կրկին պոլիտեխնիկա-
կան ինստիտուտում մարտի 5-ին չը վերսկսվե-
ցին, եւ այդ պատճառով ֆինանսների միւնիս-
տը կարգադրեց՝ փակել ինստիտուտը մինչև
ուսումնական տարվայ վերջը: Ի եւ բարձր
կուրսերի ուսանողներին թողնել հետեւեալ
ակադէմիական տարում մի եւ նոյն կուրսե-
րում, ուր նրանք գտնվում էին այդ տարի:
Իսկ առաջին կուրսի ուսանողներին արձակել՝
իրաւունք տալով ինստիտուտին թող տալ մըը-
ցական քննութիւններ բռնել, նոր մտնողների
հետ հաւասարապէս, դրանցից այնպիսիներին,
որոնց յետ ընդունելը ինստիտուտի իշխանու-
թիւնը հնարաւոր կը համարէ:

վերստ հեռու գտնվում է Բուխարայի էմիրի
նոյնանուն մայրաքաղաքը: Իմ խօսակիցը
ի՛նչաւ բարեկամներին եւ ծանօթներին վերջին
մնաս բարեւը ասելու: Երբ գնացը չարժվեց,
եւ մտայ չողեկառը եւ մեծ աղմուկի հանդի-
պեցի: Կօնդուկտորներից մէկը վզակովին տա-
լով դուրս էր անում մի սարթի, որը ուրիշ
տեղն էր բռնել: Մեծովողը բղաւում էր, բայց
օգնող չը կար: Ինձ տեսնելով, զայրացած պա-
րոնը շատ շուտով չքացաւ: Բարկացած այս
դէպքից, եւ դիմեցի Այլ-բային ու հարցրի.
—Ինչու մէջ չը տար, միթէ չէիր տեսնում,
կամ լսում:
—Էհ, թիւրայ, իմ ինչ գործս է խառնվել:
միթէ կարծում ես, որ այդ կոպիտ արարածին
եւ կարող եմ ուղղել իմ խառնվելու: Եւ շատ
լաւ գիտեմ, որ այդ կոպիտ պարոնը շատ ան-
գամ ստոր է այն ինչից ու սարթից, որին ծեծում
էր, բայց մերոնք սովոր են արդէն: Մեր ճա-
կատագիրն է, մեղ մէկը պէտք է ծեծէ՞ր կամ
մեր խաները, կամ այսպիսի կոպիտ արարած-
ները:
—Ի դուրս ես այդպէս կարծում, պատասխա-
նեցի ես, նեղացած: Դու, կամ ծեծված կա-
րող էք գնալու: Ինչ ու մեղաւորին պատժել
բող էք պատահելով, սերունդ էի նրա հետ
առաջ Այդպէս էք անում, որ ձեր շլինքին նըս-
տում են սրանք:
—Լաւ, լաւ, թիւրայ, շատ մի վրդովվիր եթէ
եւ գնալու: Ինձ էլ, նրան էլ կարող էին

Ի պատիւ Կիւմի պոլիտեխնիկական ինստիտուտի ուսանողների պէտք է ասել, որ պարագլուխները դադարեցնելու ամբողջ ժամանակը նրանք կարող են խանգարել զարգացող պատերազմը և պատշաճաբար յարգանքով էին վերաբերվում պրոֆեսորներին, որոնք իրանց կողմից ամեն միջոցներ գործ էին դնում բարձրագույն դասերի համար ուսանողներին և ուսանողների այդպիսի փոխադարձ յարաբերությունների ժամանակ եւ աչքի առաջ ունենալով իշխանութեան կատարելապէս հոգածութիւնը նրանց մասին, պարագլուխները դարձրեցին ներքին ոչինչ պատճառներ չը կային Այդ պատճառները պէտք է դրսից ներհնչված համարել:

Որոշելով ժամանակակարգային փակել ինստիտուտը, ֆինանսների մինիստրը նկատում է, թէ բարձրագույն դպրոցը պարտաւոր է բացառապէս ուսումնական նպատակներին հետամուտ լինել, այսինքն հաղորդել իր անհերքելի գիտնական տեղեկութիւնները և ամեն միջոցները տալ այդ տեղեկութիւնները լիակատար կերպով իւրացնելու համար: Այդ նպատակներին չէր կարելի հասնել վերջացող ուսումնական տարւում, պարագլուխների երկարատեւ ընդհատման և ուսանող երիտասարդութեան անհանդիստ դրութեան պատճառով, եւ մինիստրը իրան համար իրաւունք չէ համարում թող տալ գուրա թողնելու ինստիտուտից այնպիսի անձանց, որոնք իրանց գիտութեամբ անարժան են ինտենսիւնների կոչումը կրելու:

Որոշել կերպով ցուցելով, որ աւագների յորդորները, որոնք երիտասարդութեանը բարձր և օգուտն էին ցանկանում միայն, իրանց նպատակին չէ հասնում, մինիստրը յոյս ունի, որ ապագայում ինստիտուտի փակումը, որի պատճառը իրանք ուսանողներն են եղել, կը զգուշացնէ ամենից շատ ոգևորող երիտասարդներին այն ընթացքից, որ առաջ է բերում այդքան ոչ ցանկալի գործադրութիւն:

(Ար. ԲԵՏԻԱ)

Մ Ա Մ Ո Ի Լ

Ստացանք Եփեսոսում հրատարակվող «Արտէմիս» ամսուհով ամսագիրը: Անցեալներում հիմնվելով «Արտէմիսի» հրատարակած յայտարարութեան վրա, մենք մեր կատարելապէս համակրութիւնը յայտնեցինք այդ նոր ձեռնարկութեան առթիւ: Եւ ինչպէս չը յայտնէինք, Հայ կառավար իրանց սեփական օրգանն են հրատարակում, որի մէջ պիտի պաշտպանեն հայ կնոջ իրաւունքները, պիտի առաջնորդեն հայ կնոջը դէպի ժամանակակից լուսաւորութիւնը և ֆէմինիստական շարժումը: Հասկանալի է թէ ինչ հետաքրքրութեամբ պիտի կարդայինք «Արտէմիս» առաջին համարը: Բայց չենք կարող չը խոստովանել, որ այդ համարը մեզ վրա մի խառն, անորոշ տպաւորութիւն թողեց: Առայժմ մենք տեսնում ենք միայն բառեր և բանաբաններ, իսկ գործ, որը դաւանանք, պարզ գծած ճանապարհ չենք տեսնում: «Արտէմիս» դեռ խոստովանելի չըլանում է, ուստի առայժմ մի որոշ բան ասել նրա մասին չէ կարելի: Նկատելի է միայն մի հանգամանք: խոստովանում:

Ճանապարհին թողնել, եւ ոչ գիտէ գործը ուր կը տանէր, իսկ այժմ մենք հանգիստ կերպով շարունակում ենք մեր ճանապարհը:

Այդպիսի փոխօգտակարութեան առաջ եւ լուսնի — Գիտես, թիւրքայ, դիմեց ինձ Աշիր-բայը, մի քիչ ժամանակ անցնելուց յետոյ, — մեր ժողովրդի մէջ մի պատմութիւն կայ այդպիսի կոպիտ, անտաշ մարդկանց մասին:

«Քօչաղան փաշիշա՛ն օլմաղ», ասում է այդ առածը, թիւրքայ: Իսկ դրա ռուսերէնը լաւ է է գալիս. «Ишь хама не сдѣлаешь пана»:

Այդ պարոնը կոպիտ է ծնվել, կոպիտ էլ պէտք է մեռնի, այդպէս է Ալլահի կամքը, բայց լաւը միշտ եւ ամեն տեղ լաւ կը լինի: Կօնդուկտօրները մէջ էլ են ասելները:

— Եկ, թիւրքայ, եւ քեզ մի հին պատմութիւն անեմ, դու շատ եւ սիրում այդպիսի բաներ: Համ աշտօրվայ դէպքին է համապատասխանում, համ էլ ժամանակը կանցնի: Եւ մեծ ուրախութեամբ ընդունեցի Աշիր-բայի առաջարկութիւնը, ամենամեծ որ եւ առաջ էլ նրանից ուրիշ հետաքրքրելի աւանդութիւններ էի լսել: Նա սկսեց.

«Պարսկաստանում մի ժամանակ ապրում էր մի ջերմեանդ ու բարեպաշտ Ծահ, որ երկար ժամանակ թագաւորում էր Պարսկաստանի ժողովրդի վրա: Ծահի խելքի, իմաստութեան ու ճշմարտութեան համբաւը անցել էր նրա երկրի սահմաններից շատ հեռու: Հարեւան երկիրնե-

ների չըլանում «Արտէմիս» ամսուհի է ասում, որ ինքը հայ կնոջ անպայման ազատագրութիւնը չը պիտի թողնէ, որ հայ կնոջ համար դեռ վաղաժամ է Ներսիսյան կանանց նմանվելը և նրանց պէս իրաւունքներ եւ ազատութիւն պահանջելը: Ծատ լաւ: Հայա ինչ պիտի լինի հայ կնոջ գաղափարը, ճշտումը: Ամսագիրը առայժմ միայն ընդհանուր բառերով է պատահաւորութեամբ այդ հարցին, յիշեցնելով, որ հայ կինը իր նահապետական ընտանիքը պիտի զրահէ պահպանէ: Մենք, երեւի, կը տեսնենք, թէ «Արտէմիս» ինչպէս պիտի կարողանայ հայ տղանց հայ նահապետական կենցաղը ժամանակակից լուսաւորութեան հետ: Սա մի շատ ծանր եւ վերին աստիճանի հետաքրքրական գործ կը լինի:

Երեսունէ աւելի մեր օրաթերթերու եւ հանգէներու մէջ ուրեմն թող թոյլատրուի մեզ, որ «Հայ կին» ալ իր անդամակի «քոյր» թերթին ունենայ. անոր էջերուն մէջ արձակ է իր ձիւք, եթէ ունի, այդտեղ ընտելութեան դէմ, իր սիրոյ մարտը երգել, աւագը հնչեցնէ իր սրտին թեւ տալ խոյանքի, ու մտքին աշխոյժ: Ու այդու Սրտէմիսը դառնայ ընտանեկան ու զրական ժամադրաւար մեր փափուկ սեռին, նոյնպիսի մարտը եւրոպացի մամը՝ մեր զօրաւոր կոչած սեռին, մէկ խօսքով նա հանդիսանայ ծաղկաւից կողով մը բազմաբան ու գունագեղ:

Ծատ մեծ ուրախութեամբ, շատ մեծ հաճութեամբ ենք թոյլ տալիս: Մեզ համար շատ գնահատելի եւ ցանկալի է «փափուկ սեռի» այդ ժամադրաւարը: Նկատի ունենալով գործի նորութիւնը, այն, որ հայ կինը նոր է դուրս գալիս ամուսնի ասպարէզը, մենք պատրաստ ենք և շատ ներողամիտ լինել «Արտէմիս» թերթի թիւնների վերաբերմամբ, աշակցել նրան մեր բարի խորհուրդներով: Առայժմ մենք թոյլ կը տանք մեզ մի երկու թեթեւ նկատողութիւն: Գրեցէք պարզ, շատ հասկանալի լեզուով: Գրեցէք Պէշիկթաշիյանի աշխարհաբարով եւ ոչ թէ Կ. Պօլսի այժմեան լեզուով, որ նախադասութիւնների եւ բառերի մի հեշտուր չըլլալուց է ներկայացնում:

Դեռ առայժմ շատ չեն «Արտէմիս» թերթի թիւնները: Միակ նամակը, որ տպւած է այդ համարում, գրված է Բագուից եւ պատմում է մի շատ քստմնելի դէպք — թէ ինչպէս մի փաշած երիտասարդ, նշանվելով մի հայ աղջկայի հետ, խախտում է նրա կուսութիւնը եւ ապա խաղաղութիւն պիտի գնան իրանց հարսանիքի հանդէպ կատարելու, տանում մրտցնում է իր անբախտ զոհին հասարակաց տուն, եւ երբ յետոյ այդ զոհը իմանում է, որ իրան խաբուրդ ամուսնանում է մի ուրիշի հետ, փախչում է հասարակաց տանից, գնում է հարսանիքի տունը, այնտեղ իրան խաբուրդ սրբիկայի երեսին է խօսում նրա ստոր արարքը եւ ինքն ընկնում է այդտեղ ու մեռնում: Դէպքը, կրկնում ենք, շատ քստմնելի է: Ծատ ջերմեանդ կալ ենք օրերը Սթիվենսից, որ լոյս է հանել այդ դպրելի գործը: Բայց ինչու յարգելի օրերը հարկաւոր է համարել նախ եւ առաջ մի լաւ գաղափարների լրագիրների թղթակիցներին, այդ մի քիչ անհասկանալի է: Որ «պատահական» մի թղթակից կամ մի ինչ որ լրագրական ներկայացուցիչ՝ Բագուում աւելի ֆօնտաններով է հետաքրքրվում, — դա հասկանալի

րի թագաւորները դժուար բազմներում դեպքեր ենք տեսնում: Ծատ նրա խորհուրդը հարցնելու համար: Զը նայելով, որ Ծահը ամենաշահութեամբ կերպով կատարում էր օրէնքի պահանջները, ողորմութիւն էր բաժանում և մեն ուրբաթ օրերը, հարուստին, աղքատին չէր ջրկում, այրիներին ու որբերին խնամում էր եւ օրէնքի համեմատ փոխում էր իր կրկններին, բայց Ալլահը, երեւի նրա պապերի մեղքերի համար, արու գաւալ չէր տալիս նրան: Ամեն բանով Ծահը բաւական էր եւ արդէն հասնել էր խորին ծերութեան, բայց այն, որ նա մեռնելու էր առանց ժառանգի, հանգստութիւն չէր տալիս նրան ու ծծում էր մի ծածուկ որթի նման:

Մի անգամ Ծահը իր տխրութիւնը փարատելու համար որսի էր դուրս եկել: Նա իր թագաւորութեան մէջ որսի գեղեցիկ տեղեր շատ ունէր, բայց նրա սրտին ամենամոտին էր նախընտրել որսից եւ հանգիստ էր առնում նախընտրել գեղեցիկ եւ ուտարիտ ծառերի տակ: Նա ընկել էր իր սովորական մտախոհութեան մէջ: Այդ միջոցին մի սեւ լիկ, գեղեցիկ երեխայ, բոլորովին չապշած Ծահի ու նրա շքեղութիւնը պզգղուն զարդարանքներից, թանկագին շորերից, քաղ քաղ մօտեցաւ Ծահին: Նախընտրել ծառի մեծ ճիւղերից մէկը պոկեց ու մատուցեց Ծահին, որը, ապշած քաղ մանուկի

է, որովհետեւ հրապարակներում, ամեն տեղ ֆօնտանի խօսքն է: Հարսանիքի փոխարէն հասարակաց տունը ընկած Սօսայի մասին շատերը կարող էին չիմանալ: Աւելի լաւ չէր լինի, եթէ օրերը Սթիվենսից, փոխանակ թղթակիցներին, տիկին Սիրանոյշի մասին գրողներին դատապարտելու, ինքը վերցնէր եւ հաղորդէր այդ քստմնելի դէպքը լրագրութեան:

Մենք դիտմամբ կանգ առանք այս փոքրիկ հանգամանքի վրա: «Արտէմիս» առհասարակ բոլոր յօդուածներում մենք նկատում ենք մի տեսակ կուսարար, կամ, ինչպէս մեզ մօտ են ասում, ճշգրտաւ ձեւ: Այդպէս ասա մի այլ յօդուածի մէջ հանդիպում ենք այսպիսի մի կտորի.

«Մենք» որ այսօր կուսին դաշտն իջած, պաշարին, ողորմաբար ճամբան կրկնելիք, անխաթար պահելով ճակատելու դիմադրաւորութիւնը, յառաջ կերթանք անվերջապա ու անկէ ետ դառնալ չենք որոշել: Վճռապէս, հարկին առջեւ յետադարձ ըլլալ ընել վատութիւն է պարզապէս: Թերեւս ասոր համար խանգարեալ մեր անհատական ու ընտանեկան խաղաղութիւնը, մաքրագործութիւնը մեր ձեռնարկը թերեւս վաղ կամ անագան չուշայայ մեր ճակտին ալ թողնել ցելի բեկորներ: Ոչինչ, դադարախաղան մարտնչութեան մէջ անմեղ ճակատները կը խարանդին յաճախ, ու կուսող շարքերուն էն առաջին կարգերէն կընտրուին զոհերը, որոնց վրայէն կը քալին յետագայ արի տխրանքները, մարտիկները: Գնդակը շահակիր, զրօշտար առաջին գլխորդի արտին կուղղուի ապահովապէս, անոր շուրջը կը սուլէ, անոր լանջին վրա կը գամուի ու կը պայթի միշտ, ու մենք, ի հարկէ մեզ բացառութիւնը չենք նկատել այդ մարտիկներու օրէնքին, քանի որ գիտակցօրէն ալ փոթորիկն դէմ նկատուած յամառօրէն մեր սկզբունքներու խղճամիտ պահպանումին ունեւեալ ձեւը:

Թող մեզ ներքի ասել, որ դուք դեռ ոչինչ չէք արել, չը գիտէք ինչ ընդունելութեան պիտի արժանանայ ձեր սկսած գործը: Ապա ուրեմն աւելորդ է այժմից իսկ նիզակներ կոտրատել:

Իսկ չէ գալիս մեզ և հետեւեալ ներքողը, որ խորագիր Մառի Պէշիքեան խմբագրական առաջին յօդուածում նուիրում է իր ամուսնուն:

Յանգուզն գաղափար մը՝ որը գուցէ յաւիտեական երազ, յաւիտեական իդէալ մար կնձ համար, տանց անձուէր, պիտի ըսեմ իսկ հերոսական ճիգերուն այն անձին՝ որը ուղեց բաղադրեց ըլլալ ինձ: Մոլեմանք երկրպագութիւն վնձ գաղափարներու, խանդոտ սիրտը մեծ գործերուն, անպահանջ կուսող ամեն տեղ նախապաշարութեան դէմ, եւ արհամարհոտ ու անարար ամեն չարամիտ դէպքի իրադրոժմանը համար աշխատել իր բոլոր ուժերով: Եւ կը կարծեմ արդարութեան ու ճշմարտութեան տուրքը տալ, հրապարակաւ յայտնելով իմ շնորհակալութիւնս անոր՝ որ գործին հոգին՝ եւ իմ ալ թեւս եղաւ:

Կինը կործանեց աշխարհս, կինն էլ պիտի փրկէ նրան, ասում է Ալֆօնս Դօդէի հերոսուհիներից մէկը: Մենք խորապէս համոզված ենք, որ կինը, այն, մեր երանքի մէջ անգին դեր պիտի կատարէ եւ հաստացնի ենք, որ այսօր հրապարակ եկած հայ կինը ամենից առաջ պիտի մեզ գրաւէ իր լրջութեամբ եւ համեստութեամբ: Յուսանք, որ «Արտէմիս» այդպէս էլ կը լինի, որ նա, օգտվելով բարեկամական

գեղեցկութեան վրա, անվերջ նայում էր: Նա ընդունեց մանուկի երեւալը իբրեւ Ալլահից ուղարկված մի նախազուշակութիւն, ուստի սիրով ընդունեց երեխայի նուէրը, համարեց նրան ու պատուիրեց պալատականներին վերցնել մանուկին հետները: Երեխան այդ կողմերը թափառող մի բօջայի գրաւ էր: Նրան տարան պալատ, կրկնեցին արեւելեան ճոխութեան մէջ: Բօջայի երեխան մեծանում էր: Թէ Ծահը, թէ նրա չըլապատողները զարմանում էին երեխայի խելքի եւ ընդունակութիւնների վրա: Երբ երեխան 16 տարեկան դարձաւ, Ծահը պատուիրեց առաջիկայ ուրբաթ օրը մայր մղկիթում փառաւոր մաղթանք կատարել, որից յետոյ նա մտադրի էր իր որդեգրածին ցոյց տալ ժողովրդին եւ իր գահի ժառանգ յայտարարել:

Հասաւ նշանակված օրը: Ծահի շքեղութեամբ սպասում էր բախում պալատի դրան առաջ: Իբրեւ երկու սրանջիկ արաբական սպիտակ նոժոյգ, Հաղի գահի ապագայ ժառանգը տեսաւ ձիւրին, եւ անա վազեց ու սկսեց թռչնոտել նրանց շուրջը: Նա հիացել էր նոժոյգների գեղեցիկ պոչերով: Պալատականներից մէկը մօտեցաւ նրա Փաղիշահին անվայել շարվածքների վերաբերմամբ:

— Ախ, այս պոչերից որքան գեղեցիկ մազեր կարելի էր շինել, — ասաց դառնութեամբ ի սրտով պատանին:

խորհուրդներից, առաջ կը տանէ իր դործը: Եւ մի բոլորովին լաւ պատրաստված ոչ ոք, կարող էր ներկայ էին գեղեցկանալ թիւն, եթէ նա յիշաւ պիտի այն լիկն, մենք ենք ցանկանում...

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Այսօր, ֆիլիզի-աղիւստան իշխան Օրօյն մի քանի օր Թիֆլիսում մնալուց յետոյ, Լորվում է Բագու:

Երեքշաբթի, մարտի 12-ին, կովկասեան դատնտեսական ընկերութեան նիստում ներ Մայն վսկիյ կարգաց իր զեկուս Մուղանի անապատի ոռոգման մասին ժողովումը էր: Ներկայ էին գեղեցկանալ ինձենները եւ կողմնակի հետաքրքրվող Մայնվսկի ծանօթացրեց հանդիսականներին ծրագրի հետ, որի համաձայն կարելի է զանք էփան գնով ոռոգել, առանց զիմալութանց միջոցներին, որ առաջարկում է վարչութիւնը: Այնտեղ, ուր ջրային չութիւնը ծրագրել է 200,000 ռուբլու լիկ գումար, Մայնվսկին բաւական է ընտրում միայն 25,000 ռուբլի: Մայնվսկու գրումը առաջ բերեց ընդարձակ վիճարկութիւններ, որոնք չը վերջացան եւ յետոս, հետեւեալ նիստին, որի մասին ժամանալայտարարվի:

Սուբադից մեզ հետագրում են, որ երեք թի, մարտի 12-ին, այնտեղ հրդեհից մի վայ ընթացքում այրվել են չորս շինութիւն:

Թիֆլիսի քաղաքային վարչութիւնը, լով վրաց մէջ գրագիտութիւն տարածող թութեան միջնորդութիւնը, որոշեց Վրաց նայա փողոցը անուանել Բրօսսէի անունով:

Կովկասեան ուսումնարանական շրջանի չութիւնը մի չըլաբերականով պատերիկ լոր դպրոցական իշխանութիւններին նախազեկու՝ տօնելու համար Ժուլիօվսկու լեանը, նրա մահվան յիսնամեակի առթիվ:

Մօսկվայից հետագրում են «НОВОСТИ» թերթի, որ այդտեղ է հասել կովկասեան լուսւոտուրէ գէրներէց մէկը, որ մենում է Մօսկվայի եւ Պետերբուրգի վաճառների ուշադրութիւնը դարձնել կովկասեան թէլի տնկարանների վրա: Նրա սեղով, նոյն իսկ այժմ թէլի թիւերով ծախվի դեպիտանը տարեկան մօտ 600 ռուբլի կամուտ է տալիս:

Վրացիների մէջ գրագիտութիւն տարածելու թիւերը մարտի 3-ին մի հետագի ուղարկել ֆրանսիական ժողովրդական լուսւոտութեան մինիստրութեանը այն հոգեւոր տի մասին, որ այդ ընկերութիւնը կատարեալ իշխանութիւն Այժմ, ինչպէս հոգում է «НОВОЕ ОБОЗРѢНІЕ» լրագիրը, մի ընկերութիւնը ստացել է ֆրանսիական նիստորից իր հետագրի պատասխանը, որը ստված է: «Ծատ եւ շատ ուրախ եմ, որ իմ

Ծահը դուրս էր եկել արդէն պալատի տեսաւ բոլորը եւ լսեց պատանու վերջին քերքը: Ծահը հոգոց հանեց ու ասաց.

— Երեւի այդպէս է գրված իմ բաղդը մէջ: Ալլահը ինձ ժառանգ չը պարգեւեց եւ չը պէտք է նրա կամքին հակառակ երթ: «Բօջայաւան» — փաղիշահ օլմաղ՝ ասաց նա ու լրագրաձաւ պալատը, չը գնալով այլ եւս մղկիթը:

— Անա այսպէս, թիւրքայ, վերջացրեց իր քեր Աշիր-բայը, բօջայի որդուն չը վիճաւատել մեծ Կիւրոսի գահի վրա:

Մենք մօտենում էինք Բուխարային կից սկսեց ժողովել իր բաները, իսկ եւ իսկ իսկ մեջ ընկալ: Որքան լաւաւ նման մեր հայկական իրական կեանքին: Ինչպէս կան հայերի մէջ այդպիսի բօջաներ տեղիդնաւ, թէ վաճառական, թէ հոգեւոր սակարգի մէջ:

— Մնաւ բարով, թիւրքայ, գուցէ չենք վի, գնում եմ վերջին անգամ Բուխարա սուրբ տեղերը համբուրելու:

Եւ սեղմեցի նրա ձեռքը եւ բարի ծանուցաւ մաղթեցի, իսկ ինքս իշալ Հին-Բուխարան նկու համար:

Հիւսիսեան

թիւնը պատուեց հնագէտ պատմաբան Բրու-
նիսի հոգեւորական տոհմի մէջ: Այս հանգամանքը բա-
նալիքն էր իր ծննդավայրէն: Սակայն իր անհատական
հատկանիշները իրենք իրենք չէին հարմար
երկրի մէջ:

Օպերային ներկայացումները ծրագրէր ար-
հեստական թատերական համալսարանի մէջ
հիմնադրելու: Պատճառը հարաւորեալ
հիմնադրելու էր երգչուհիներին հիւանդութիւնն է,
որոնք մասնաւոր շատ վնասեց երգչուհի Տետրա-
միսին: Երկուշաբթի օրվայ համար նշանակված
«Միսին» օպերան յետաձգվեց այդ պատճառով:
Երկշաբթի եւ չորեքշաբթի օրերին տրվեցին
«Բալ Մակարա» եւ «Նորմա» օպերաները:
որոնց մէջ երգեց մեծ աղջկան իրենց երգչուհի
Պատիկ Լատարակովի: Դեռ չէ լցնում թատերո-
ւորական դահլիճը:

«Новое Время» լրագիրը հաղորդում է, որ
հոգեւորականացած մի խումբ Պետերբուրգի
հիմնադրում առաջարկեց նպատակ նշանակել յո-
ւան լատինացիների քաղաքային միջոցները:
Թիվով խումբը սահմանափակում էր իր օր-
հանքը 5,000 ռուբլու: Գումարով բայց նիստի
թանկանակ նրանց առաջարկութեանը միացաւ
եւ ծայրաւոր Կէդրին յայտ յայտնելով, որ գու-
նան յի մերթի օգնել թշուառացած քաղաքի
ապրողներին թեան աւելի մեծ գումարով, օրի-
նակ, 25,000 ռուբլու: Առաջարկութիւնը յանձն-
վեց քաղաքային իշխանութեանը:

ՅՈՒՆԻՏԵՄԻՏԻ մեզ գրում են. «Ամսիս 8-ին, ուր-
աքի, Գանձակի նահանգական դատարանը, ընդ-
նկալելով Շուշիում Սպիտակեան եպիսկոպոսի գործը,
որով նա մեղադրվում էր կեղծ վկայական տա-
լու եւ իրաւազանցութեան մէջ, մի գործ, որի
մէջ մեղադրվում էին եւ Շուշու կոնստանտնու-
պոլսեան, ինչպէս եւ չուլեցի Գորգոր Յա-
րութիւնեանց, իր 2 վկաներով, դուրս բերեց
հետեւեալ վճիռը: Այս գործի մէջ բոլոր մեղա-
դրվածներին համարել արդար Մանրամասնու-
թիւնները կը հաղորդեն եկող անգամ: Ասում
են, որ պիտուի որոշ մտադիր է բողոքել այդ
դատարանի դէմ»:

ՇՈՒՆԱՎԵՐԻՏԻ մեզ գրում են. «Ծառերը շատ
վաղուց են ծաղկել, արտերը կանաչել, մի թիւ
բարձրացել են: Երեւում է, որ այս տարի
պտուղը շատ անկաւ կը լինի, որովհետեւ
փետրվարի վերջին օրերում եկած ձիւնը բաւա-
կան վնասեց պտուղներին: Պէտք է յուսալ, որ
այս տարվայ արտերը անատ բերք կը տան,
որովհետեւ չը կան անցեալ տարվայ միջերը:
Այսպէս քաղաքային եւ Կարսի ալիւնները Շուշու-
թիւնով ծաղկում են 1 ր. 20 կոպէկ պտուղը»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԳԵՐՄԱՆՆԻՍԻՏ

Լայպցիգ, մարտի 10-ին

Վերնայի յայտնի երկրաբան զօկտօր Յրանց
Շաֆեր, մարտի 8-ին, Քերլին: աշխարհագրա-
կան քննութեան ժողովում կարգաց հայերի
համար հետաքրքրական մի դասախոսութիւն
թանկանակից Կիրիլիայի մասին, ուր երկուս-
տաք զինականացը մի ճանապարհորդութիւն էր
կատարել աւստրիական արեւելագիտական ըն-
կերթեան նախաձեռնութեամբ: Այդ դասախո-
սութեան մանրամասն բովանդակութիւնը ար-
դէն լոյս է տեսել, որից քաղում ենք հետե-
ւեալը:

Ոչ մի երկիր այնպէս ընդհանր կերպով չէ կը-
րում իր պատմական անցեալի կնիքը՝ հետքերը,
ինչպէս ժամանակակից Կիրիլիան: Չը նայելով, որ
Կիրիլիան մի ժամանակ ծաղկած կուլտուրական
գործառնակէտի վրա էր գտնվում, բայց այժմ
գործադարար, նա Ասիայի աննշան երկրներին
մէջ մի Կիրիլիայի ամեն կողմում երեւում են
նրա մի ժամանակվայ ծաղկած դրոշմեան հետ-
քեր, կապիկական հին դարի եւ միջնադարեան
գործառնակութիւնների աւերակները:

Նա ժամանակ Կիրիլիայի ամենահետադը-
րեալ կենտրոնները Անարդարա կամ Անավար-
դա եւ Օլաք քաղաքներն էին: Անարդարան մեծ
նշանակութիւն ստացաւ Ալեքսանդր Մակեդո-
նացու ժամանակ հռոմէական տիրապետու-
թեան օրով կազմում էր Կիրիլիան եւ հռոմէական
պրովինցիայի մայրաքաղաքը, իսկ միջին դա-
րում, իրեն գլխաւոր քաղաք Կիրիլիայի հայ-
կական իշխանութեան ու թագաւորութեան,
առաջնակարգ դեր էր կատարում: Այդ քաղաքը
երբեմն շրջապատված էր անուշահոտ ձիթապտ-
ղի անտառներով, իսկ այսօր այնտեղ միայն

ճահիճ եւ անապատ է ներկայացնում: Հին ջը-
րանցքները, տաճարները, թատրոնները եւ ուրիշ
բազմազան շէնքեր իրենք իրենք մնացորդները
ցոյց են տալիս, որ Անարդարան մի ժամանակ
մի քանի հարիւր հազար բնակիչներից բաղկա-
ցած եւ բարձր բազմաթիւութեան հասած աղ-
քաբնակութիւն է ունեցել, իսկ այժմ ճանա-
պարհորդը այդտեղ մի ծառի անգամ չէ հան-
դիպում: Անավարդայի ամբողջ տարածութիւնը
գրեթէ ծածկված է եղեգներով, մշտական եւ
հաստատուն աղքատնակութիւն չունի, բացի
չէրքէզական այն ցեղերը, որոնք միայն ձմեռը
այդ ջերմաստի տեղում են ապրում, որ մի-
այն ճագարների եւ իծերի հայրենիքն է կազ-
մում:

Օլաքն Կիրիլիայի ափից մի օրվայ ճանապարհ
հեռաւորութեան վրա է գտնվում եւ հռոմէա-
կան տիրապետութեան օրով օլբիական Ջուսի
հոգեւորական զինատիրայի նշանաւոր կենտ-
րոնն էր կազմում: Օլաք քաղաքի պատմական
աւերակները (բազիլիկա, թատրոն եւ մի ըն-
դարձակ նեկրոպօլի մնացորդներ) վկայում են,
որ դա էլ մի ժամանակ քաղաքակրթված վայ-
րերից մէկն է եղել: Այժմ այդտեղ միայն մի
քանի խրճիթներ կան, որոնց մէջ թշուառ բը-
նակիչները մի խումբ իր ողորմելի գոյութիւնն
է քաջ տալիս: Մի ժամանակ այդ քաղաքը չը-
շապատող տարածութիւնը խիտ, հարուստ եւ
անմատչելի անտառներով էր ծածկված, իսկ
այժմ դա մի ապաւանտում եւ խոտաշուրջ տեղ
է, ուր միայն ծառերի փոստ եւ ծերացած ար-
մատներն են մնացել:

Իօկտօր Շաֆեր մի առ մի թւեց Կիրիլիայի
այն բոլոր տեղերը, որոնց ինքը այցելել է իր
ճանապարհորդութեան ժամանակ եւ ցոյց տուեց
մի քանի հետաքրքրական պատկերներ: Ժամա-
նակակից Կիրիլիայի ամենապլանտը նաւահան-
գիւղը Ներսիսն է, որ եւրօպական տեսք,
բայց ոչ յարմար դիրք ունի: Շոգենաւերը նա-
ւահանգստից բաւական հեռու են խարիխա գը-
ցում, հարաւային քամու ժամանակ շատ վը-
տանգաւոր դրութեան մէջ են գտնվում եւ
չեն կարողանում կանգնել:

Երկրորդ նշանաւոր քաղաքը Տարսնն է, որ-
տեղ, ի միջի այլոց, ապրում են եւ բաւական
ֆեյլաններ, որոնք մոծակներից խուսափելու
համար իրանց խրճիթները բարձր ձողերի վրա
են շինում: Փեյլանները գերմանական բժիշկնե-
րից աւելի շուտ են հասկացել, որ մոծակներն
են ջերմ հիւանդութեան տարածողները: Տար-
սնը Կիրիլիայի ներկայ վաճառահան քաղաքնե-
րից մէկն է, մասնաւոր ձիերի եւ չաքարե-
ղէգնի առեւտուրի համար: Աղանա քաղաքի
հիւսիսային կողմում բարձրանում են մի քա-
նի, միմեանցից առանձնացած ժայռեր, որոնցից
խրաւանդները վրա հայկական մի մի ամբողջ
կայ: Բայց հնագիտական տեսակէտից ամենա-
հետաքրքիր քաղաքը Անարդարանն է, որտեղ մի-
շուստ այսօր նկատվում են մի հին թատրոնի
նստեղու կարգերը, մի ջրանցքի եւ հայկական
մի եկեղեցու հետքերը:

Դասախօսը զեկուցեց եւ Կիրիլիայում ապրող
մահմեդական մի աղանդի մասին, որ կրօնական
բողոքով տարբեր աշխարհայեցողութիւն ու-
նի, քան թէ մահմեդականները: Այդ աղանդի
հետեւողները պաշտում ու երկրպագում են
ծառն եւ գեղեցիկ կանանց: Ծառ նշանաւոր
քաղաք է եւ Սեւեւիան, որ գտնվում է Կալի-
կառնոս գետի մօտ, ուր խեղդվեց Յրիշիլի
Բարբարոսան: Հետաքրքիր է եւ Չաքի-Չալի
հովիտը կամ ազգերի այն գլխաւոր դուռը,
որտեղով նուաճող ազգերը եւ ժողովուրդները
մտել են Կիրիլիայի ներքեւ: Իօկտ. Ֆ. Շաֆեր
ազգաբնակւան տեղեկութիւններ տուեց եւ Կի-
րիլիայում ապրող աֆշարների ցեղի մասին:
Հետաքրքրական է այն երեւոյթը, որ այդ ցե-
ղին պատկանող ջահիլ աղբիւրները իրանց քիւ-
րի ալ կողմերից կախում են միմեկին պտուկ-
ներ, իսկ հարուստները այդ գործարարները ու-
կուց են պատրաստում: Սրանով վերջացրեց
դասախօսը իր ճանապարհորդական նկարագրու-
թիւնը, որ մեծ ընդունելութիւն գտաւ ունկնե-
րների կողմից:

Ինչպէս հաղորդում են մարդաբանական եւ
հնագիտական թերթերն ու հանդէսները, այս
տարի ամառը Պարիզի «Grand-Palais»-ում
պէտք է ի ցոյց դրվեն Ֆրանսիացի յայտնի
մարդաբան եւ հնագէտ Մ. դը Մորգանի Պարս-
կաստանում կատարած հնագիտական պեղում-
ների արդիւնքները: Յայտնի կը լինի արդէն,
որ 1894 թ. Յրանսիայի հանրապետութիւ-
նը Նաբեղդին Շահից ամբողջ Պարսկաստանում
պեղումներ կատարելու մօծապօլիայի իրաւուն-
քը ստացաւ այն պայմանով, որ գտնված հնու-

թիւները կէսը յանձնէ պարսկական թանգա-
րանին: Հնագիտական պեղումներ կատարելու մի
նոր պայմանագիր ստորագրեց պարսից ներկայ
Շահ Մուզաֆէր-Էղզինը անցեալ տարի ամառը,
երբ նա Պարսկում էր գտնվում: Այդ նոր պայ-
մանագրի զօրութեամբ էլ գտնված հնութիւն-
ների կէսը մնում է պարսից կառավարութեան:

1897 թվին գիտնական Մորգանը դնաց Պարս-
կաստան եւ Սուլա հին մայրաքաղաքում մի-
շաք պեղումներ արեց, որոնց ժամանակ մօտ
1200 պարսիկ բանւորներ էին աշխատում: Վե-
րոյիշեալ պեղումների ժամանակ գտնվեցին մի
շաք պատմական զօկուրմաններ, որոնք պատ-
կանում են Սուլայի իշխաններին եւ թագա-
ւորներին: Սուլայի Ակրօպօլիսը կամ միջնա-
բերդը գտնվում էր 50 մետր բարձրութիւն ու-
նեցող մի բլրի վրա եւ ամբողջապէս շինված է
եղել այժմ աղիւսից: Միջնաբերդում էին
թագնում Սուլայում նստող թագաւորները
իրանց գլխաւոր զանձները: Ալեքսանդր Մակե-
դոնացին իր ժամանակին այնտեղ բազմաթիւ
զանձ գտաւ: Սուլայի միջնաբերդում երեւան
է եկել եւ մի տաճար, որ ըստ աւանդութեան
ամբիփում է իր մէջ Դանիէլ մարգարէի գե-
րեզմանը: Բայց ամենանշանաւոր գիւտերից
մէկն է 2 մետր բարձրութիւն ունեցող
մի քար, որ ներկայացնում է Նաթանգին
(3000 թ. Ք. ա.) թագաւորի կոթողը: Գտնվել
է եւ Մանիսթու-Իրաա թագաւորի օբիւսկը,
որի վրա գտնվող 12500 նշանագրերը որոշ
կերպով պարզարանում են Նաւիլիայի ամբողջ
աշխարհագրութիւնը: Պաշտօնական արժէք ու-
նեն եւ հետեւեալ իրերը, որոնք նոյնպէս
գտնվել են Սուլայում: 4 մարդկանց վրա յենված
եւ օձերով չորպապատված մի բրոնզեայ սեղան,
4 մետր երկարութեան ունեցող մի կոթող
18-րդ դարում (Ք. ծ. ա.) եւ բրոնզեայ մի իր,
որ իր ժամանակին Արիստագորսոս անունով
յոյնը նուիրել է Ապօլլօնին եւ Աքեմենեան
հարստութեան թագաւորներից մէկը իբրեւ-
աւար բերել է Սուլա: Գտնված բրոնզեայ ի-
րերից շատերը զարդարված են արձանագրու-
թիւններով եւ շատ անգամ պարսից թագաւոր-
ների անունների ցուցակն են պարունակում:
Բացի դրանցից գտնաւոր Մորգանին աղջկան
է երեւան հանելու 2000 կաւեայ տախտակներ,
որոնք արձանագրութիւններ ունեն եւ մեծ մա-
սամբ ներկայացնում են մասնաւոր մարդկանց
պայմանագրեր:

Լ. Բաբայան

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

— Յրանսիական պատգամաւորների ժողովը
մօտ օրերում ընդունեց մի օրինագիծ, որի
համաձայն ընդհանուր ընտրութիւնները այսու-
հետեւ պէտք է կատարվեն ոչ 4 տարին մի
անգամ, ինչպէս այժմ, այլ 6 տարին մի ան-
գամ: Պատգամաւորների ժողովի այդ վճիռը մի
բողոքովին անսպասելի լինում էր հասարակու-
թեան համար, որ նոյն իսկ չը գիտէր էլ, թէ
մի այդպիսի օրինագիծ կայ առաջարկված ժո-
ղովին: Օրինագիծ հեղինակը արմատական պատ-
գամաւոր Պուրկերի զը Բուսաստէնին է: Աւելի
եւս անսպասելի հանգամանք էր ժողովուրդական
լուսաւորութեան միջնադարի կէջի յայտարարու-
թիւնը, որ Վալդէ-Լուստից բացակայութեան
պատճառով խոսում էր կառավարութեան կող-
մից: Ի զարմանս ամենքի նա յայտնեց, թէ կա-
ռավարութիւնը ընդունում է Պուրկերի զը
Բուսաստէնին առաջարկը, որովհետեւ պատգա-
մաւորական լիազօրութիւնների 4-ամսայ ժա-
մանակամիջոցը չափազանց կարճ է, ուստի եւ
կարեւոր օրէնսդրական միջոցների լուրջ եւ ու-
շաղիք ծննդութիւնը գիտարարութիւնների է հան-
դիպում: Բացի դրանից յիշված բարեփոխու-
թիւնը ցանկալի է եւ այն պատճառով, որ ընդ-
հանուր ընտրութիւնները խանգարում են զոր-
ծերի խաղաղ ընթացքը երկրի մէջ եւ ցանկալի
է, որ նրանք տեղի ունենան ոչ յաճախ: Օրի-
նագիծը դէմ խօսողներն են նրան պաշտպանող-
ները՝ բոլորն էլ պատկանում էին ձախարհո-
ւան կուսակցութեան: Բուլիէ պաշտպանում
էր առաջարկած օրինագիծը, իսկ Վիլիսան եւ
Պէլլետան կարճակովում էին նրա վրա՝ անու-
նելով նրան հակադէմօկրատիական: Վիճաբա-
նութիւնների ժամանակ տիրում էր մեծ յուզ-
մունք եւ կրք ժողովը ձեռնամուխ եղաւ
քուէարկութեան երեւաց, որ ոչ մի կուսակ-
ցութիւն առաջուց չէր խորհրդակցել այն մա-
սին, թէ պէտք է արդեօք քուէարկել յօդու-
օրինագիծ կամ նրա դէմ: Վերջի վերջոյ Պուր-
կերի առաջարկութիւնը ընդունվեց 298 ձայ-
ների մեծամասնութեամբ: 237-ի դէմ: Լուսա-
ւորութեան միջնադարի կէջի բունը դիրքը լը-
րագիրները ապացոյց են համարում այն բանի,
որ կառավարութիւնը բողոքովին հաւատացած
է իր ծրագրի յաղթանակին առաջիկայ ընտ-
րութիւնների ժամանակ, որովհետեւ հակառակ
դէպքում նա ձայն չէր տալ յօդուս այն ծրա-
գրի, որ երկարացնում է ապագայ պատգամա-
ւորական ժողովի լիազօրութեան ժամանակա-
միջոցը:

«Temps» լրագրի թղթակիցը հաղորդում է
Կ. Պոլսից, թէ ուսուցչական Ձիւսիլիւն, ա-
մենաւանդուն կերպով պահանջելով սուլթա-
նից րէֆօրմներ մոյնիւլ պետութեան մէջ, բա-
ւականաչափ հատկանշի կերպով անհարկեց,
որ Աւստրիան կարող է միջամտութիւն գոր-
ծել Մակեդոնիայում, իսկ Ռուսաստանը—Հա-
յաստանում, թէ ներկայ դրութիւնը չը բար-
ւադրի: Կանգնած չը կայ, որ իրերի դրութիւնը
Մակեդոնիայում եւ Ալբանիայում մեծ վտանգ
է սպառնում լիազորութեան գործին: Սուլ-
թանի հրամանով այն դրամական նպաստները,
որոնք տրվում էին արտասահմանում սովորող
թիւրք երիտասարդներին, ոչնչացրած են: Դրա
պատճառն այն է, որ նպատակ ստացող ուսա-
նողները ներկայ են եղել «Երիտասարդ թիւր-
քերի» կոնգրէսին, որ տեղի ունեցաւ Պարի-
զում: Նպատակ ստանալով էին մօտ 70 ուսանող-
ներ, որոնք մեծ մասամբ սովորում են Պարի-
զում եւ ժրնակում:

—Հոսից հետագրում են «L'oeil Anzeiger»
լրագրին, թէ ձիւլ տեղեկութիւններ ունեցող
չըլաններից հաղորդում են, որ վերջին ժամա-
նակ երեքպետեան դաշնակցութեանը պատկա-
նող կառավարութիւնների մէջ տեղի էին ու-
նենում գաղտնի բանակցութիւններ աւետարա-
կան եւ դաշնակցական պայմանագրութիւնների
մասին: Երեք պետութիւններն էլ իրար մէջ
հասան ցանկալի համաձայնութեան:

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍՍԻՅ ԳՐՈՒԹԱԿԱՆՈՒԹԻՒՆԻՏ

12 մարտի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. «Օրէնքների ժողովածուի» մէջ
մարտի 12-ից տպված է Ռուսաստանի եւ Բու-
մինիայի միջեւ 1902 թվի փետրվարի 9-ին
(22-ին) կապված դաշնագրի Դուռայի եւ Պրու-
տի ջրերում ձկնորսութեան մասին:

ՕՐԷՍԱ. «Вѣдомости Одесскаго Града-
нства» լրագրում հաղորդված է, որ Նոցա
կայսերական Մեծութիւնները բազմաթիւներ
կոմսուհի Ա. Ի. Շուվալովայի շնորհով ըն-
ծանկը—թանգաղին վազաներ կայսերական յախ-
ճապակեայ գործարանից այն վիճակաւաղի հա-
մար, որ սարքում է կոմսուհին՝ չքաւորների
ապաստարանի նոր շինութիւններ կառուցանե-
լու նպատակով միջոցներ աւելացնելու համար:
ԽԱՐԿՈՎ. Տեղի ունեցաւ փութագրած կրէդի-
տի ընկերութեան ընդհանուր ժողովը, որը վը-
նապել է անցեալ տարվայ բանկային սնանկու-
թիւնից: Չը նայելով լրացուցիչ անդամակա-
ներին, անհրաժեշտ է էլի 157,000 ռուբլու
վնասներ ծածկել: Ամեն օր բալաչօվեան գծով
անցնում են բազմաթիւ գաղթականներ զէպի
Չէլիաբինսկ:

ՄՈՍԿՎԱ. Եւրօպական-կուստրօնեան բանկը վճեց
միջնորդել դրամագուլիւր մէկ միլիօնով մեծա-
ցնելու մասին: Գէօտինգէնեան համալսարանի
փիլիսօփայութեան դօկտօր Լիւբով Ջապօլ-
կայային թույլատրվում է գուտ մաթեմատիկայի
մագիստրոսի քննութիւն ընել Մոսկվայի հա-
մալսարանում:

ԼՈՆԴՈՆ. Կիտչեներ հաղորդում է Պրէտ-
որիայից մարտի 11-ից. «Վերջին չաքաթվայ ըն-
թացքում սպանվեցին 5 բօքսներ, գերի ընկան
95 եւ անձատուր եղան 63, գտնված են երեք
թնդանօթներ: Լիգընէրէրեան հովտում, մի-
ջին Կապեան գաղթականութեան մէջ, գտնվում
է Մալանսիի 200 մարդից բաղկացած թշնամի
զորաւորութիւն: «Daily Chronicle» տեղեկութիւն
ստացաւ, որ բանակցութիւնները չարունակե-
լու ժամանակ անգլիական զորաւորմանների
յարձակողական գործողութիւնները Դէվլտի,
Դէլաբէյի եւ Բօտայի դէմ կը դադարեցնվեն,
մինչեւ որ բօքսական այդ երեք պարագուլի-
անքը զինադադար կը պահպանեն եւ մինչեւ որ
բեքսական պատուիրակները կը վերադառնան
զէպի իրանց զօրերը:

«Daily Mail» իմանում է, որ ընդհակառակն
զինադադարի մասին խօսք էլ չը կայ եւ պա-
տերազմական գործողութիւնները Դէլաբէյի դէմ
կը շարունակվեն:

ՍՅՈՒՍԱ. Միջնադար-նախագահ Դանիլ ճանա-
պարհ ընկաւ Պետերբուրգ:

ՊԱՐԻՉ. Նախագահ Լուրէյի Ռուսաստան
գնալու համար արտակարգ կրէդիտ տալու մա-
սին բացատրել գրութեան մէջ բերված է այն
նամակի բնագիրը, որով Կայսր Նիկօլայ II հրա-
ւիրում է նախագահ Լուրէյին:

ՊԱՐԻՉ. Դէլաբէյի մոյնում է 500,000 ֆրանկ
կրէդիտի առաջարկութիւնը նախագահ Լուրէյի
Ռուսաստան գնալու համար, մի եւ նոյն ժա-
մանակ յիշեցնում է Ռուսաց Կայսրի նամակի
մասին, որով հրաւիրվում է Լուրէյն զալ՝ ան-
ձամբ համոզվելու համար այն միաբան զգաց-
մունքների մէջ, որ ազգաբնակիչները տա-
ծում է զէպի Յրանսիան, նոյնպէս եւ ֆրանսա-
ստական միութեան անող ոյթի մէջ: Կրէդի-

